



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Արմավիրյան ակադեմիայի ղեկավար,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր _____ Ս.Վ.Առաքելյան

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Արման Արսենի Բաբախանյանի «Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի
քրեաիրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»

վերտառությամբ ԺԲ.00.05 մասնագիտությամբ իրավաբանական

գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը նվիրված է քրեական ենթամշակույթին առնչվող քրեաիրավական նորմերի խորը վերլուծությանը, դրանում առկա հակասությունների, թերությունների և բացթողումների բացահայտմանը, օրենսդրական և իրավակիրառ մակարդակներում քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական հակազդեցության արդյունավետության բարձրացմանն ուղղված, գիտականորեն հիմնավորված քրեաիրավական միջոցների համակարգի մշակմանը:

Հեղինակը փորձել է մշակել գիտական այնպիսի աշխատանք, որը կարելի է համարել ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ ՀՀ-ում առկա արժեքավոր համապարփակ հետազոտություններից մեկը:

Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի քրեաիրավական տարբեր խնդիրներ ժամանակակից քրեական իրավունքի գիտության մեջ լայնորեն և բազմակողմանիորեն քննարկվել են ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան տարբեր հեղինակների կողմից: Այդ առումով առանձին ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Ա.Բաբախանյանի կողմից աշխատանքի առանձին պարագրաֆներում առաջ են քաշվել և քննարկվել հետևյալ հարցերը.

- քրեական ենթամշակույթի տարածվածության աստիճանը հայաստանյան հասարակությունում,

- օրենսդրական մակարդակում գողական խոսվածքի՝ գողական աշխարհում կիրառվող եզրույթների օգտագործման թույլատրելիությունը,
- գործող քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի որոշ ինստիտուտներում քրեական ենթամշակույթին առնչվող հատուկ իրավակարգավորումներ սահմանելու անհրաժեշտությունը,
- «գողական աշխարհ» և «քրեական ենթամշակույթ կրող խմբավորում» եզրույթների հարաբերակցությունը,
- քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերի իրավական վերլուծությունը,
- քրեական ենթամշակույթի դեմ պայքարի քրեաիրավական միջոցների համակարգի կատարելագործման ուղղությունները և այլն:

Շարադրվածը վկայում է հեղինակի ընտրած թեմայի արդիականության և հրատապության մասին:

Հետազոտության արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետազա գիտական հետազոտությունների համար: Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումները և հետազոտության արդյունքների վրա հիմնված առաջարկությունները կարող են թե՛ օգտագործվել իրավակիրառ պրակտիկայում և թե՛ օրենսդրական փոփոխությունների հիմք հանդիսանալ:

Աշխատանքը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ. այն բաղկացած է ներածությունից, երկու գլխից, դրանցում ներառված ութ պարագրաֆից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածությունում շարադրված է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակը և խնդիրները, թեմայի մշակվածության աստիճանը, իրավական հիմքը, տեսական հիմքը, փորձառական հիմքը, մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների արժանահավատության աստիճանը, արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը:

Առաջին գլխում՝ «Քրեական ենթամշակույթի տարածվածությունը և դրա դեմ քրեաիրավական պայքարի ընդհանուր հիմնախնդիրները» վերտառությամբ՝ հեղի-

նակը ներկայացնում է քրեական ենթամշակույթի տարածման միտումները Հայաստանի Հանրապետությունում, քրեական ենթամշակույթը բնութագրող եզրույթների օրենսդրական ամրագրումը, ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասում քրեական ենթամշակույթին առնչվող իրավակարգավորումների նախատեսման հիմնախնդիրները և քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմեր նախատեսելու անհրաժեշտությունը:

Հիմնվելով կատարված ուսումնասիրության վրա՝ հեղինակը կատարում է մի շարք արժեքավոր եզրակացություններ, որոնք, մասնավորապես, հանգում են հետևյալին.

– Հայաստանի Հանրապետությունում քրեական ենթամշակույթը՝ որպես սոցիալական երևույթ, ունի բազմամյա պատմություն, որի ընթացքում այն, ենթարկվելով որոշակի փոփոխությունների, շարունակում է պահպանել իր գոյությունը և դեռևս չի զիջում իր դիրքերը՝ տարածվելով հասարակության տարբեր շերտերում, այդ թվում՝ անչափահասների շրջանում, ՀՀ զինված ուժերում:

– «Հանցավոր ենթամշակույթ» և «քրեական ենթամշակույթ» եզրույթները համարժեք չեն: Հանցավոր ենթամշակույթը շատ ավելի լայն եզրույթ է և իր մեջ, ի թիվս այլնի, ներառում է նաև քրեական ենթամշակույթը: Այլ կերպ՝ հանցավոր ենթամշակույթը և քրեական ենթամշակույթը հարաբերակցվում են որպես ամբողջ և մաս: Այսինքն՝ քրեական ենթամշակույթն առավել համընդգրկուն երևույթի՝ հանցավոր ենթամշակույթի բաղկացուցիչ մասն է միայն, դրա տարրերից մեկը: Հետևաբար, օրենսդիրը, գործող Օրենսգրքում միաժամանակ կիրառելով այդ եզրույթները, թույլ չի տվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի խախտում: Այլ կերպ՝ օրենսդիրը վերը նշված երկու եզրույթները չի կիրառել միևնույն միտքը արտահայտելիս:

Աշխատանքի երկրորդ գլխում՝ «Քրեական ենթամշակույթին առնչվող հանցատեսակների քրեաիրավական բնութագիրը» վերտառությամբ, հեղինակն անդրադարձել է քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակին կամ քրեական ենթամշակույթին առնչվելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերի օբյեկտիվ հատկանիշներին, քրեական աստիճանա-

կարգության բարձրագույն կարգավիճակին կամ քրեական ենթամշակույթին առնչվելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերի սուբյեկտիվ հատկանիշներին, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակին կամ քրեական ենթամշակույթին առնչվելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերի որակյալ հատկանիշներին, հետհանցավոր դրական վարքագիծ դրսևորելու դեպքում քրեական ենթամշակույթին առնչվող հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվությունից ազատելուն:

Տվյալ գլխում կատարված ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հեղինակը հանգել է մի շարք եզրակացությունների: Դրանցից կարելի է առանձնացնել հատկապես հետևյալները.

- Գողական աշխարհի հավաք կազմակերպելը կամ դրան մասնակցելը՝ որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորումներ, գործող Օրենսգրքում նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է:

- Գողական աշխարհ բռնության, սպառնալիքի կամ հարկադրանքի այլ եղանակով ներգրավելն առանձին նախատեսելն ընդունելի չէ: Ուստի, անհրաժեշտ է հրաժարվել այդպիսի մոտեցումից՝ ուժը կորցրած ճանաչելով գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասը և դրա հետ կապված այլ իրավակարգավորումները:

- Գործող Օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան խմբագրել և շարադրել հետևյալ կերպ. «Գողական աշխարհի անդամին, գողական աշխարհի գործունեությանը ներգրավված անձին կամ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձին դիմելը՝ նրա անօրինական ազդեցությունն օգտագործելու միջոցով գույքային կամ ոչ գույքային օգուտ կամ այլ առավելություն ստանալու կամ իրական կամ ենթադրյալ իրավունքն իրականացնելու համար, կամ գողական աշխարհի անդամին, գողական աշխարհի գործունեությանը ներգրավված անձին կամ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձին դիմելու արդյունքում նրանց անօրինական ազդեցությունն օգտագործելու միջոցով գույքային կամ ոչ գույքային օգուտ կամ այլ առավելություն ստանալը կամ իրական կամ ենթադրյալ իրավունքն իրացնելը»:

– «Օրենքով գող կամ քրեական հեղինակություն» եզրույթի փոխարեն առավել տեղին է օգտագործել «քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ» («օրենքով գող», «պոլիժենեց», «զոն նայող» և այլն) եզրույթի կիրառումը: Միևնույն ժամանակ, ավելորդ կրկնաբանությունից խուսափելու նպատակով՝ առավել նպատակահարմար է գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ն մասում կիրառել «օրենքով գող», «պոլիժենեց», «զոն նայող» և այլն ձևակերպումը, իսկ այլ իրավանորմերում օգտագործել միայն «քրեական աստիճանակարգության բարձր կարգավիճակ» ձևակերպումը:

– Գործող Օրենսգրքի 323-324-րդ հոդվածներում նախատեսված որակյալ հատկանիշներն անհրաժեշտ է խմբագրել և շարադրել հետևյալ կերպ. «Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրում կամ քրեակատարողական հիմնարկում կամ ձերբակալված կամ կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող անձի կողմից,

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

3) զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում կամ զինված ուժերում կամ այլ զորքերում ծառայողի կողմից,

4) անչափահասի ներգրավմամբ կամ

5) քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձի կողմից»:

Հարկ է նշել, որ հեղինակի կողմից մշակված ատենախոսության կառուցվածքը լավագույնս նպաստել է վերջինիս կողմից կատարված ամբողջական և բազմակողմանի վերլուծությունը և առաջ քաշած խնդրների լուծումները ներկայացնել առավել պարզ և մատչելի եղանակով: Աշխատանքը գրված է գրագետ, իրավաբանական լեզվով:

Միևնույն ժամանակ, հարկ է արձանագրել, որ աշխատանքի վերաբերյալ առկա են որոշ նկատառումներ և դիտողություններ, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին.

1. Հեղինակն առաջարկում է գործող Օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ «ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում քրեական օրենքով նախատեսված արարքը ՀՀ տարածքից դուրս կատարած ՀՀ քաղաքացիների, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց, նաև ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց, ՀՀ-ում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձանց քրեական պատասխանատվության հարցը լուծվում է ՀՀ քրեական օրենսգրքով՝ անկախ արարքը կատարելու վայրի պետության տարածքում այն հանցանք համարվելուց», անհրաժեշտ է լրացում կատարել՝ ի լրումն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերի թվարկելով նաև գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով նախատեսված արարքները (էջ 45):

Տվյալ մոտեցմանը դժվար է համաձայնել, քանի որ գործող Օրենսգրքում այդպիսի դեպքերի համար արդեն իսկ սահմանված են համապատասխան կարգավորումներ: Այսպես, Օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե կատարված արարքն ուղղված է Հայաստանի Հանրապետության շահերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացու, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձի, Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձի կամ իրավաբանական անձի իրավունքների և ազատությունների դեմ»:

Այսինքն՝ հեղինակի նշած օրինակում՝ եթե անձը տնօրինի գողական աշխարհի միջոցով ստացված անօրինական օգուտը, ապա նա Օրենսգրքով կենթարկվի քրեական պատասխանատվության, եթե դա ուղղված է Հայաստանի Հանրապետության շահերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացու,

այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձի, Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձի կամ իրավաբանական անձի իրավունքների և ազատությունների դեմ:

2. Հեղինակն առաջարկում է Օրենսգրքում հրաժարվել «քրեական ենթամշակույթ կրող խմբավորում» հասկացությունից և կիրառել միայն «գողական աշխարհ» հասկացությունը, քանի որ իրավական որոշակիության տեսանկյունից այն առավել ընկալելի է գողական աշխարհի ներկայացուցիչների կողմից:

Այս մոտեցմանը ևս դժվար է համաձայնել: Բանն այն է, որ հարց է առաջանում. արդյոք իրավական որոշակիությունը տվյալ դեպքում պայմանավորված է գողական աշխարհի ներկայացուցիչների համար նշված հասկացության առավել ընկալելի լինելու հանգամանքով: Թերևս՝ ոչ, դա չի կարող համարվել իրավական որոշակիության չափանիշ:

Բացի դրանից, եթե, ըստ հեղինակի, գողական աշխարհը գողական օրենքով առաջնորդվող բոլոր մարդիկ են՝ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ դրա սահմաններից դուրս, ապա այդ դեպքում ու՛մ պետք է ենթարկել քրեական պատասխանատվության, օրինակ՝ գողական աշխարհի ստեղծելու համար:

3. Հեղինակն առաջարկում է Օրենսգրքի 323-րդ հոդվածի 3-րդ մասում առկա՝ «(...) որը գործում է իր սահմանած և ճանաչված վարքագծի կանոնների համաձայն, որոնք չեն համապատասխանում պետության սահմանած վարքագծի համապարտադիր կանոններին կամ դրանց իրացման իրավաչափ ձևերին» ձևակերպման փոխարեն նախատեսել «գողական օրենք» բառակապակցությունը (էջ 72):

Տվյալ մոտեցմանը նույնպես դժվար է համաձայնել, քանի որ այն շեղվում է իրավական որոշակիության սկզբունքից: Այդ պարագայում հարց կառաջանա, իսկ ի՞նչ է գողական օրենքը, որո՞նք են դրա անհատականացնող հատկանիշները և առանձնահատկությունները: Դրանք, ամենայն հավանականությամբ, պետք է բացահայտվեն Օրենսգրքում՝ համապատասխան հասկացությունը

սահմանելով: Վերջինիս շրջանակներում, թերևս, անխուսափելիորեն պետք է օգտագործվի «(...) որը գործում է իր սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն, որոնք չեն համապատասխանում պետության սահմանած վարքագծի համապարտադիր կանոններին կամ դրանց իրացման իրավաչափ ձևերին» ձևակերպումը: Այդ պարագայում՝ ի՞նչ իմաստ ունի առաջարկվող փոփոխությունը:

4. Հեղինակը նշում է՝ «օրենսդիրը, որպես քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ դիտարկելով նաև քրեական հեղինակություններին, փաստացի տվյալ հասկացության շրջանակը սահմանել է ավելի լայն՝ հնարավորություն տալով իրավակիրառ մարմիններին որպես քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող դիտարկել նաև այդ աստիճանակարգությունում ավելի ցածր կարգավիճակ ունեցող, բայց քրեական հեղինակություն համարվող անձանց, ինչն ընդունելի չէ: Հետևաբար, անհրաժեշտ է հրաժարվել քրեական հեղինակություն տերմինը կիրառելուց» (էջ 131):
- Տվյալ առաջարկին ևս դժվար է համաձայնել: Բանն այն է, որ նման պարագայում, ըստ էության, կկատարվի մասնակի ապաքրեականացում, ինչը բացասականորեն կանդրադառնա քրեական ենթամշակույթի դեմ պայքարի արդյունավետության վրա: Այդ իմաստով վիճելի է նաև հեղինակի անհամաձայնությունը հարցման ենթարկվածների շուրջ 55%-ի կարծիքին առ այն, որ ընդունելի է «քրեական հեղինակությանը» որպես քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող դիտարկելը:

Այնուհանդերձ, ներկայացված նկատառումները և դիտողությունները որևէ կերպ չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսական հետազոտության արդյունքները և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Ատենախոսությունը և դրա սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան: Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի

պարբերականներում հեղինակի հրատարակած հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Հետևաբար, քննարկվող ատենախոսական հետազոտությունն արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող, ավարտուն, հետաքրքիր, ինքնուրույն ուսումնասիրություն է, որը ներառում է տեսության, օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Արման Արսենի Բաբախանյանի՝ «Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի քրեաիրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման՝ ԺԲ.00.05 «Քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ:

Ատենախոսությունը քննարկվել է Արդարադատության ակադեմիայի գիտական խորհրդում և արժանացել դրական եզրակացության:

«01» դեկտեմբերի 2025թ.

Արդարադատության ակադեմիայի
գիտահետազոտական և ծրագրամեթոդական
աշխատանքների կազմակերպման բաժնի
գլխավոր մասնագետ



Ա.Բայադյան